ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Հարգելի՛ գործընկերներ

Մոսկվայի պետական լեզվաբանական համալսարանի ԱՊՀ անդամ պետությունների լեզուների և մշակույթների բազային կազմակերպությունը, ԱՊՀ և Մերձավոր արտերկրների լեզուների և մշակույթների ամբիոնը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Ռուսաստանի Դաշնությունում ՀՀ դեսպանատան, «Ռուսաստանի հայերի միության» աջակցությամբ հրավիրում է ձեզ մասնակցելու **«Հայագիտությունը լեզուների և մշակույթների համատեքստում» միջազգային գիտագործնական գիտաժողովին**, որը տեղի կունենա **2023 թվականի ապրիլի 18-19-ը:**

Վայրը՝ Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, Օստոժենկա 36, ՄՊԼՀ, լսարան 205:

Գիտաժողովի նպատակը՝ մարդկության զարգացման բոլոր փուլերում հայոց լեզվի գոյատևման և զարգացման պայմանների (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը) ու հայ ժողովրդի էթնոգենեզի հետազոտումը:

Գիտաժողովի հիմնական ուղղություններն են՝

1. Ավանդույթներ և նորարարություններ հայոց լեզվի և գրականության դասավանդման մեթոդիկայում
2. Հայոց լեզու. թարգմանության արդի խնդիրներ
3. Պատմահամեմատական լեզվաբանություն
4. Միջմշակութային հաղորդակցություն. լեզու և մտածողություն
5. Հայերենի տերմինաբանության ոլորտում վերջին հետազոտությունները. գիտատեխնիկական առաջընթացի և ժամանակակից պայմանների ազդեցությունը:

Գիտաժողովին մասնակցելու համար հրավիրվում են գիտնականներ, դասախոսներ, ուսումնական հաստատությունների աշխատակիցներ, լրացուցիչ մասնագիտական կրթության հաստատությունների ղեկավարներ, ասպիրանտներ, ուսանողներ, միջազգային և հասարակական

կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Աշխատանքային լեզուներ՝ ռուսերեն, հայերեն, անգլերեն:

Գիտաժողովը նախատեսում է **առկա/հեռակա** մասնակցության ձևեր:

Գիտաժողովի նյութերը կտպագրվեն առանձին էլեկտրոնային ժողովածուի տեսքով: Գիտաժողովի նյութերը կհրատարակվեն Միջազգային ստանդարտ գրքահամարով (ISBN) և Գիտական մեջբերման ռուսական ցուցիչ (РИИЦ) բազա մտցված ժողովածուում:

ՌԳՄԻ ժողովածուում հոդվածի ձևավորման պահանջները

1) Հոդվածի ծավալը պետք է գերազանցի 3 էջը:
2) Word-ում տպված ֆայլի ձևաչափը՝ doc (docx):
3) Ակնառու տեղեկատվությունը (նկարները) ուղարկվում է jpeg, bmp, gif ձևաչափով: Տվյալ նյութին կցվում են բացատրություններ:
4) Տառաչափը՝ 14, միջտողային հեռավորությունը՝ 1,5, պարբերությունը՝ 1 սմ: Տեքստը հավասարեցված է ըստ լայնության:
5) Հոդվածն ընդունվում է ամսագրի խմբագրության կողմից միայն Համընդհանուր տասնորդական դասակարգման նշանակումից հետո: Այն կարող է ինքնուրույն նշանակել ՄՆԿ (ИИЦ՝ թարգմանաբար մտավոր ներդրումների կենտրոն) Գիտական գրադարանի պաշտոնական ռեսուրում:
6) Գրադարանային -գրադարանավարական դասակարգման ցուցիչի առկայությունը ԳՄՌՑ (РИИЦ՝ թարգմանաբար գիտական մեջբերման ռուսական ցուցիչ) հոդվածի պարտադիր պայմանն է:

Նյութերի տրամադրման կարգը

Մասնակցության հայտը և հոդվածը անհրաժեշտ է ուղարկել կազմկոմիտեի armconforgcom@mail.ru էլ հասցեին:
Հայտի նմուշը ներկայացված է ստորև:

Մասնակցության հայտին կցված ֆայլերը և հրապարակման նյութերը պետք է կոչվեն հեղինակի ազգանունով և անվան/հայրանվան սկզբնատառերով՝ նշելով ֆայլում պարունակվող տեղեկատվությունը (օրինակ՝ Իվանով Ի.Վ._ հայտ.doc; Իվանով Ի.Վ._հոդված.docx):

Ֆայլի ձևաչափը՝ *doc կամ *docx: Հոդվածի երկու և ավելի հեղինակների դեպքում ֆայլը կոչվում է առաջին հեղինակի անունով:

Ձևավորման պահանջներին կամ գիտաժողովի թեմային չհամապատասխանող հայտերը և հոդվածները չեն դիտարկվի Կազմկոմիտեի կողմից:

Հոդվածների ձևավորման պահանջները

Ընդունվում են նախկինում չհրապարակված հոդվածներ՝ մեքենագրված տեքստի 5-8 էջ ծավալով և հղումների ցանկով:

Նյութերը տրամադրվում են միայն էլեկտրոնային տարբերակով:

Բոլոր հոդվածները գրագողության ստուգում են անցնում: Հոդվածի ինքնատիպությունը պետք է լինի առնվազն 75%:

Վերևի ձախ անկյունում՝ հոդվածի սկզբում նշվում է Համընդհանուր տասնորդական դասակարգման (ՀՏԴ) համարը:

Վերևի աջ անկյունում գրվում է՝

1. Հեղինակների ազգանունները, անվան/հայրանվան սկզբնատառերը ուղղական հոլովով (օրինակ, Տաշմատով Պ. Ս., Պետրով Ս. Ի), ոչ թավ, հավասարեցումը՝ աջ կողմով; աշխատանքի վայրի և պաշտոնի նշումը ուղղական հոլովով: Եթե հոդվածը գրելուն մասնակցել են տարբեր հաստատությունների հեղինակներ, ապա նրանցից յուրաքանչյուրի մասին տեղեկատվությունը պետք է տրվի նույն հերթականությամբ (ոչ թավ, հավասարեցումը՝ աջ կողմով):
2. Հոդվածի վերնագիրը գրվում է երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն: Անհրաժեշտ է տպել մեծատառերով, թավ, հավասարեցումը՝ կենտրոնից:
3. Ամփոփումը (100 բառ) գրվում է Times New Roman տառատեսակով, տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1, «ամփոփում» բառը՝ թավ, ամփոփման տեքստը՝ ոչ թավ: Տողադարձ չի թուլլատրվում:
4. Հանգուցային բառերը (10 բառ կամ բառակապակցություն) տեղադրվում են ամփոփման տեքստից հետո: «Հանգուցային բառեր» արտահայտությունը գրվում է թավ, իսկ հանգուցային բառերը՝ ոչ թավ, բաժանված ստորակետերով: Տողադարձ չի թույլատրվում:

Ամփոփումն ու հանգուցային բառերը գրվում են երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն: Օտարերկրյա մասնակիցների հոդվածներում՝ ռուսերեն և անգլերեն լեզուներով:

5. Հոդվածի տեքստը գրվում է երեք լեզուներից մեկով՝ հայերեն, ռուսերեն կամ անգլերեն:

6. Հոդվածը պետք է պարունակի գրականության ցանկ: Տողադարձ չի թույլատրվում:

7. Հոդվածը տրամադրվում է էլեկտրոնային տարբերակով Times New Roman տառատեսակով, 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1,5, պարբերության խորքը՝ 1,25:

8. Տեքստի լուսանցքները պետք է լինեն 2 սմ վերևից, ներքևից, աջից և ձախից:

9. Հոդվածում հղումներն արվում են՝ նախադասության վերջում նշելով հղման համարը (ըստ գրականության ցանկի համարակալման) և գրքի էջը, որտեղից արվել է մեջբերումը: Օրինակ՝ [5, c. 67]:

Անհրաժեշտ տեղեկություն կարող եք ստանալ +7 925-459-19-01

հեռախոսահամարով կամ armconforgcom@mail.ru էլ փոստով:

Թեզերն ընդունվում են մինչև 2023 թվականի ապրիլի 10-ը:

Հոդվածներն ընդունվում են մինչև 2023 թվականի ապրիլի 15-ը:

Վերջնաժամկետից հետո ուղարկված նյութերը չեն դիտարկվի:

Լրացուցիչ ծառայությունների համար խնդրում ենք դիմել կազմակերպիչներին:

Լրացուցիչ ծառայությունների մասին տեղեկությունների հա (հոդվածների թարգմանության, խմբագրման հետ կապված հարցերի վերաբերյալ) դիմե՛ք գիտաժողովի կազմակերպիչներին:

Հավելված

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ

Անուն, ազգանուն, հայրանուն (ամբողջությամբ)	
Զեկույցի ամբողջական վերնագիրը	
Գիտական ուղղվածությունը	
Պաշտոն	
Գիտական աստիճան, կոչում (եթե կա)	
Գիտական ղեկավար (մագիստրանտների և ասպիրանտների համար). անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն, գիտական աստիճան, կոչում	
Աշխատանքի վայրը (հաստատության անվանումը, ամբողջությամբ, առանց հապավումների)	
էլեկտրոնային փոստի հասցե	
Բջջային հեռախոսահամար	
Մասնակցության ձևաչափը (առկա/հեռակա)	